մէջ բացորոշ արտայայտուել են հայ ազգի մտքերն ու զգացումները դէպի Ռուսիան և ռուսաց վեհապետները։ Այդ աղօթքի բովանդակութիւնը քաղուածօրէն յառաջ ենք բերում։

«Եւ արդ՝ մեք ամենեքեան խոնարհեալ անկանիմք առաջի քո և մեծաւ պաղատանօք հայցեմք յամենատատ յողորմութենէդ քումմէ, (Տէր Աստուած մեր) զի չնորհեսցես զՍա մեզ (դայս անուն) ամենողորմած Կայսրն ամենայն Ռուսաց ընդ երկայն աւուրս արդարադատ և իրաւախոհ թագաւորութեամբ. յատկապէս չնո՞րհք, ողորմութի՞ւն և օգնականութիւն քո անպակաս արասցես ի սմանէ... Զթագաւորութիւն Սորա յաղթօղս, զօրաւորս և անպարտելիս արասցես ի վերայ ամենայն թագաւորութեանց. ձեռն քո ընկալցի և բազուկ քո զօրացուսցէ զսա. զթշնամիս սորա հալածականս արասցես. և զյարուցեալսն ի վերայ սորա ի ներքոյ ոտից սորա արկցես։ Քո ամենայաղթ զօրութեամբդ և սրբոյ խաչիդ նշանաւն ամրացուսցես և պարսպեալ պահպանեսցես զսա և զթագաւորութիւն սորա յամենից յերևելեաց և յաներևութից թշնամեաց։ Աճեցուսցես և պտղաբերս արասցես զսա արքայպտնօք և քոյապարգև զաւակօք։ Անպակասելի և անթառամելի արասցես զթագաւորութիւն սորա յազգէ յազգ և յորդւոց յորդիս մինչև ի կատարած աշխարհի... Նոյնպէս և զսիրտ քոյապսակ թագաւորիս մերոյ (այս անուն) քաղցր և գթած պահեսցես առ ամենայն ստորադրեցեալսն իւր և մանաւանդ առ ազգս Հայոց. ընդ Որոյ հովանաւորութեամբն մնալով ի խաղաղութեան, փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»։

Այդպէս են աղօթում հայերը ռուսաց Կայսրի համար, այդպէս էլ աղօթիլ են Նրա համար դեռ այն օրերում, երբ հայերի հայրենիքն և հայրապետական Աթոռը ռուսաց պետութեան սահմաններին մէջ չէին մտած։

Սիմէոն կաթողիկոսը Բարձրագոյն հրովարտակի զօրութեամբ 1773 թ. Ռուսաստանի հայոց վիճակաւոր առաջնորդ կարգեց իշխան Յովսէփ Արղութեան Երկայնաբազուկին։ Այդ ընտրութիւնն Էջմիածնի հովուապետի իմաստութեան և հեռատեսութեան ապացոյց էր։ Յովսէփ Արղութեան Երկայնաբազուկ արքեպիսկոպոսը ծագում էր մի ականաւոր իշխանական զարմից և վսեմ մտքի ու ճոխ կրթութեան տէր անձն էր՝ գեղեցիկ ու պատկառելի դէմքով, խոշոր ու մտածկոտ աչքերով, որոնք

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան